



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. նոյեմբերին /վերլուծություն/

2006թ. նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 11007 գործարքներ, որոնց քանակը 2005թ. նոյեմբերի համեմատ աճել է 12.7%-ով, իսկ 2006թ. հոկտեմբերի համեմատ՝ 0.5%-ով:

2006թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4573 օտարման գործարքների 89.8% կազմել են առուվաճառքները, 9.7%՝ նվիրատվությունները և 0.5%՝

փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 34.5% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.5% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2006թ. նոյեմբերին, 2006թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 3.4%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 12.7%-ով: 2006թ. նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 67.7% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2006թ. հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 4.5%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 11.5%-ով:

2006թ. նոյեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. նոյեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2005թ.	նոյեմբեր 2006թ.	հոկտեմբեր 2006թ.
Կենտրոն	178900-900000	330300	401500	397000
Արաբկիր	114300-771000	264600	321900	313500
Քանաքեռ Զեյթուն	111100-362900	161000	218300	199000
Նոր-Նորք	92300-327800	154800	187300	181600
Ավան	99100-226300	136300	180100	171100
Էրեբունի	103800-293400	134600	194500	169000
Շենգավիթ	105100-399400	165500	202000	191600
Դավթաշեն	118000-282100	168100	205500	203500
Աջափնյակ	103800-451100	155500	192600	184400
Մալաթիա-Սեբաստիա	90300-271900	151000	182300	174200
Նուբարաշեն	57400-137500	89600	117600	112600
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	57400-900000	173800	218500	208900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. նոյեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ. հոկտեմբերի համեմատ աճել են 4.6%:

2006թ. նոյեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 499 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 3.7%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 6.4%-ով:

2006թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն	Միջին գները /դրամ/
--------	----------	---------------------------	--------------------

		գները 2006թ. նոյեմբերին /դրամ/	նոյեմբեր 2005թ.	նոյեմբեր 2006թ.	հոկտեմբեր 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	60300 - 95000	50600	80000	76200
	Ապարան	18000 - 30000	23600	26600	26600
	Թալին	13600 - 34800	21900	29300	27900
Արարատ	Արտաշատ	39100 - 137780	40700	63300	60900
	Մասիս	36000 - 96100	52100	73600	70100
	Վեդի	22600 - 65300	34400	49400	48000
	Արարատ	19300 - 75100	37500	50400	48000
Արմավիր	Վաղարշապատ	71000 - 159100	75500	101600	98600
	Արմավիր	38700 - 125200	45200	70200	66900
	Մեծամոր	33000 - 67600	25500	46200	44000
Գեղարքունիք	Սևան	28300 - 88200	30600	46900	44700
	Գավառ	20400 - 40000	22800	30600	29100
	Մարտունի	22500 - 67500	36600	42700	40700
	Վարդենիս	13500 - 30000	19600	23200	22100
	Ճամբարակ	5900 - 31100	10900	13900	13900
Լոռի	Վանաձոր	27000 - 115200	42300	58900	56100
	Ստեփանավան	15000 - 35000	23100	28700	27300
	Սյիտակ	30300 - 57300	27200	40300	40300
	Ալավերդի	9600 - 30000	18400	23300	22200
	Տաշիր	11300 - 33300	20200	21800	21800
	Թումանյան	4100 - 11300	5300	5400	5400
	Շամլուղ	2300 - 8300	2800	3000	3000
	Ախթալա	6800 - 16000	10500	10900	10900
Կոտայք	Արովյան	55000 - 184700	78500	118000	114700
	Նոր Հաճն	53100 - 101000	56900	80300	78000
	Բյուրեղավան	22700 - 79800	37400	57400	55700
	Եղվարդ	50200 - 88200	48300	72700	70600
	Հրազդան	20900 - 73400	27900	42900	41700
	Ծաղկաձոր	68000 - 90000	57700	80600	80600
	Չարենցավան	26300 - 78400	36100	51400	49000
Շիրակ	Գյումրի	25100 - 127100	42200	58200	55400
	Արթիկ	19600 - 61500	25800	37700	35900
	Մարալիկ	8400 - 30000	21900	23800	22700
Սյունիք	Գորիս	26800 - 79300	45700	56300	54700
	Կապան	29000 - 91400	32400	55100	53500
	Սիսիան	26700 - 62700	28600	47400	46000
	Մեղրի	20000 - 43300	23700	35300	33600
	Ազարակ	9000 - 31100	18000	21900	21900
	Քաջարան	20200 - 45600	17300	29700	28300
	Դաստակերտ	4500 - 11300	6500	6800	6800
Վայոց Ձոր	Վայք	39500 - 58000	30500	51600	50100
	Եղեգնաձոր	33800 - 117000	42900	63400	63400
	Ջերմուկ	43600 - 189200	46600	78400	76100
Տավուշ	Դիլիջան	28100 - 95800	34400	56500	54900
	Իջևան	40600 - 99900	39400	67900	66000
	Բերդ	22100 - 70600	26200	31400	30500
	Նոյեմբերյան	8500 - 30000	14400	24300	24300
	Այրում	12000 - 22000	10000	18000	18000

2006թ. նոյեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ. հոկտեմբերի համեմատ աճել են 3.3%:

2006թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 500 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 113, մյուս մարզերում միասին վերցրած՝ 387: 2006թ. հոկտեմբերի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 3.7%-ով, ընդ որում Երևանում աճել է 2.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 5.4%-ով: 2005թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 2.5%-ով, ընդ որում Երևանում՝ 10.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 0.3%-ով:

2006թ. նոյեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. նոյեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2005թ.	նոյեմբեր 2006թ.	հոկտեմբեր 2006թ.
Կենտրոն	135000-900200	345000.0	402600	399100
Արաբկիր	90000-450100	276400.0	323000	315500
Քանաքեռ-Զեյթուն	67500-270100	164700.0	219400	200400
Նորք-Մարաշ	90000-450100	184100.0	193900	191700
Ավան	90000-360100	140700.0	181200	172800
Էրեբունի	67500-225100	140600.0	195600	170300
Շենգավիթ	67500-202500	170600.0	203000	193400
Դավթաշեն	90000-405100	171500.0	206700	205600
Աջափնյակ	67500-270100	159100.0	193800	186000
Մայրաթիա-Սեբաստիա	67500-405100	154200.0	183300	176700
Նուբարաշեն	40500-155000	90100.0	118600	115300
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	40500-900200	181500.0	220100	211500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. նոյեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ հոկտեմբերի համեմատ աճել են 4.1 % :

2006թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. նոյեմբեր /դրամ/	Միջին գները /դրամ/		
			2005թ. նոյեմբեր	2006թ. նոյեմբեր	2006թ. հոկտեմբեր
Արագածոտն	Աշտարակ	29100 - 98000	51900	81200	77700

	Ապարան	13500 - 36000	24800	27900	27900
	Թային	13600 - 36000	23500	30400	28800
Արարատ	Արտաշատ	22500 - 141000	41700	64900	62500
	Մասիս	25000 - 98000	53300	74700	71200
	Վեդի	22500 - 67500	35400	50900	49800
	Արարատ	22500 - 76800	39000	51700	49400
Արմավիր	Վաղարշապատ	54100 - 164200	76700	103000	100200
	Արմավիր	22500 - 126000	46600	71200	68100
Գեղարքունիք	Սևան	18000 - 90600	34200	47900	46400
	Գավառ	10000 - 37800	24600	31800	30700
	Մարտունի	22200 - 68000	39200	43900	42000
	Վարդենիս	11000 - 32500	21800	24400	23200
	Ճամբարակ	4500 - 32600	12800	14900	14800
Լոռի	Վանաձոր	23200 - 116800	43400	60100	58600
	Ստեփանավան	13500 - 40200	27200	29900	28500
	Մալիտակ	20000 - 58600	29000	41600	41500
	Ալավերդի	9000 - 31500	19600	24500	23300
	Տաշիր	9000 - 36500	21500	23200	23000
	Թումանյան	4500 - 18000	6700	7200	7200
	Շամլուղ	2300 - 13500	4200	4600	4500
	Ախթալա	9000 - 22500	12100	12500	12500
Կոտայք	Աբովյան	45500 - 191600	82400	119500	116000
	Նոր Հաճն	42500 - 105800	58100	81700	79300
	Բյուրեղավան	22200 - 81400	38300	58500	56900
	Եղվարդ	30200 - 90300	50300	73900	72100
	Հրազդան	18000 - 74000	30400	43900	43100
	Ծաղկաձոր	40000 - 112500	58700	86400	82200
	Չարենցավան	18000 - 79300	38600	52500	50200
Շիրակ	Գյումրի	28200 - 129000	44000	59200	56600
	Արթիկ	13300 - 62400	28000	38800	37100
	Մարաիկ	13500 - 40000	23800	24800	24300
Սյունիք	Գորիս	18000 - 79900	46700	57500	56100
	Կապան	22000 - 94000	34500	56200	54900
	Միսիան	20000 - 66400	29600	48600	47700
	Մեղրի	13500 - 44800	24900	36400	35400
	Ագարակ	13300 - 36000	20300	23400	23200
	Դաստակերտ	4500 - 18000	8800	8900	8900
Վայոց Ձոր	Վայք	26000 - 60000	31600	53000	51200
	Եղեգնաձոր	22200 - 118400	45600	64900	64800
	Զեյրմուկ	26500 - 191600	31400	40500	39700
Տավուշ	Դիլիջան	26600 - 97500	36100	57500	56100
	Իջևան	22200 - 101100	40600	69000	67100
	Բերդ	20000 - 71200	27100	32400	31600
	Նոյեմբերյան	9000 - 31500	15700	25700	25500
	Այրում	5200 - 28000	10700	19200	19200

2006թ. նոյեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. հոկտեմբերի համեմետ աճել են 3.1 %:

Ընդհանուր առմամբ, 2006թ. նոյեմբերին հանրապետությունում օտարվել են 1815 միավոր /1450.62 հա/ հողեր, որից Երևանում՝ 127 միավոր /20.60 հա/, այդ թվում ՀՀ

հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 115 միավոր /17.91 հա/ հողեր, որից Երևանում՝ 39 միավոր /10.38 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 785 միավոր /1338.78 հա/ ընդհանուր մակերեսով: Երևանում գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:
- բնակելի կառուցապատման հողեր՝ 643 միավոր /56.61 հա/, որից Երևանում՝ 66 միավոր /3.72 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 318 միավոր /35.42 հա/, որից Երևանում՝ 49 միավոր /8.12 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 28 միավոր /12.55 հա/, որից Երևանում՝ 12 միավոր, /8.76 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր 31 միավոր /6.54 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- էներգետիկայի օբյեկտների հողեր 10 միավոր /0.70 հա/ ընդհանուր մակերեսով: Երևանում էներգետիկայի օբյեկտների հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. նոյեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1728 միավորի /1416.35 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 122 միավոր /20.38 հա/, նվիրատվության գործարքներ՝ 79 միավորի /31.13 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.17 հա/ և փոխանակության գործարքներ՝ 8 միավորի /3.14 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.04 հա/:

Հանրապետությունում 2006թ. նոյեմբերին, 2005թ. նոյեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 48.7%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 8.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 93.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 4.7 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ 31 գործարքով և էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ 10 գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 660.64 հա, որից 653.81 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 41.3% կամ 714 գործարքներ /656.60 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 38 գործարքներ /9.41 հա/, իսկ 58.6%-ը կամ 1013 միավորը /759.75 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 83 միավոր /10.97 հա/: 2006թ. նոյեմբերին Երևանում արձանագրվել են վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք /0.001 հա/:

Ստորև ներկայացվում է 2006թ. նոյեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների, էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չեսական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	9	4.21	6	0.59	23	4.62	0	0.00	3	4.55	55	2.92	25	3.50
Արագածոտն	31	92.72	0	0.00	0	0.00	6	0.85	35	34.71	0	0.00	38	3.06	1	0.01
Արարատ	68	163.25	5	0.61	42	4.08	41	0.47	105	42.55	0	0.00	55	4.92	5	0.12
Արմավիր	40	198.51	3	0.39	7	0.58	46	0.41	115	455.31	0	0.00	60	5.39	3	0.06
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	1	0.12	5	0.27	18	16.96	1	0.20	13	1.80	2	1.01
Լոռի	0	0.00	1	1.03	4	0.16	18	2.81	66	39.03	0	0.00	4	0.61	2	0.09
Կոտայք	63	132.58	2	0.23	64	5.83	39	1.31	118	62.28	1	0.39	189	19.55	11	4.95
Շիրակ	8	14.27	0	0.00	45	1.58	30	0.94	17	16.13	0	0.00	5	0.23	1	0.01
Սյունիք	2	0.28	2	0.69	2	0.08	23	0.42	16	21.39	1	0.25	3	0.34	2	0.02
Վայոց Ձոր	5	5.18	0	0.00	2	0.08	24	3.13	8	7.43	0	0.00	5	0.84	2	0.04
Տավուշ	2	9.09	0	0.00	5	0.43	4	0.16	14	5.80	0	0.00	8	0.49	1	0.23
Ընդամենը	219	615.88	22	7.16	178	13.53	259	15.39	512	701.59	6	5.39	435	40.15	55	10.04

Ստորև ներկայացվում է 2006թ. նոյեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների և էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	34	8.72	9	4.21	4	0.37	21	4.14	4	0.69	0	0.00	0	0.00	2	0.22	2	0.47
Արագածոտն	3	0.01	0	0.00	0	0.00	3	0.01	34	93.56	31	92.72	0	0.00	0	0.00	3	0.84
Արարատ	26	0.55	4	0.11	1	0.17	21	0.27	130	167.86	68	163.25	1	0.50	41	3.91	20	0.20
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	96	199.89	40	198.51	3	0.39	7	0.58	46	0.41
Գեղարքունիք	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	5	0.38	0	0.00	0	0.00	1	0.12	4	0.26
Լոռի	5	0.13	0	0.00	1	0.08	4	0.05	18	3.87	0	0.00	1	1.03	3	0.08	14	2.76
Կոտայք	13	0.52	0	0.00	0	0.00	13	0.52	155	139.44	63	132.58	2	0.23	64	5.83	26	0.80
Շիրակ	6	0.094	0	0.00	5	0.09	1	0.004	77	16.69	8	14.27	0	0.00	40	1.49	29	0.93
Սյունիք	7	0.47	1	0.43	0	0.00	6	0.04	22	1.01	2	0.28	1	0.27	2	0.08	17	0.38
Վայոց Ձոր	6	1.49	0	0.00	0	0.00	6	1.49	25	6.90	5	5.18	0	0.00	2	0.08	18	1.64
Տավուշ	8	0.52	0	0.00	4	0.36	4	0.16	3	9.17	2	9.09	0	0.00	1	0.08	0	0.00
Ընդամենը	109	12.51	14	4.75	15	1.07	80	6.69	569	639.46	219	615.88	8	2.42	163	12.47	179	8.69

Հանրապետությունում 2006թ. նոյեմբերին 2005թ. նոյեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 3.0 անգամ: Ընդ որում Երևանում նվազել է 86.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 3.5 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի

գործարքների քանակը աճել է 95.5%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 2.9 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 6.4 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 4.0 անգամ, հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ՝ 25 գործարքով, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ 4 գործարքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. նոյեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	23	77.92	35.6	827.6	232.2	26	16.90	362.2	6772.5	2348.6
Ապարան	4	8.10	228.3	309.4	270.0	2	5.15	90.6	767.6	344.0
Թալին	4	6.70	34.3	191.8	73.7	5	3.19	90.6	758.5	337.1
Ծաղկահովիտ						2	9.47	77.0	948.2	164.2
Արարատի մարզ										
Արտաշատ	32	33.43	30.1	1530.1	501.2	52	16.44	335.1	5418.0	1252.4
Մասիս	12	51.53	30.1	1533.3	352.2	15	11.86	181.1	6772.5	1618.9
Վեդի	24	78.29	34.8	850.3	314.8	37	13.87	203.8	4515.0	1038.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	20.92	30.2	3591.0	1478.7	51	49.70	294.3	4063.5	820.5
Բաղրամյան	13	81.92	20.3	67.5	34.3	15	377.26	90.6	677.3	512.4
Վաղարշապատ	22	95.67	17.9	1411.2	207.2	45	27.14	443.7	9030.0	1345.9
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						12	7.12	190.2	496.7	338.1
Ճամբարակ						1	0.81	45.3	541.8	143.2
Մարտունի						1	0.67	45.3	1806.0	450.5
Սևան								45.3	451.5	188.3
Վարդենիս						4	8.35	27.2	532.8	214.1
Լոռու մարզ										
Ալավերդի						58	26.02	163.0	2483.3	935.5
Գուգարք								226.4	2709.0	890.1
Սպիտակ						2	0.30	226.4	1490.0	493.6
Ստեփանավան						4	9.44	90.6	2257.5	342.7
Տաշիր						2	3.27	45.3	451.5	197.8
Կոտայքի մարզ										
Աբովյան	17	48.04	35.1	870.2	269.6	50	14.72	271.7	11287.5	2986.2
Եղվարդ	36	74.44	35.8	2562.0	318.5	50	35.12	172.1	11287.5	2100.5
Հրազդան	10	10.10	68.8	670.0	250.3	17	12.25	113.2	2709.0	767.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	0.40	265.0	265.0	265.0	13	14.93	249.0	1693.1	414.9
Ամասիա						3	0.48	36.2	237.0	106.6
Անի	7	13.87	123.8	206.5	152.9	1	0.72	108.7	361.2	210.2
Աշոցք								45.3	112.9	109.2
Արթիկ								63.4	1083.6	158.1

Սյունիքի մարզ										
Գորիս						5	13.71	90.6	673.3	322.5
Կապան						1	0.48	54.3	841.6	214.6
Մեղրի	2	0.28	800.0	809.5	804.8	1	0.30	181.1	1784.2	428.8
Սիսիան						9	6.90	45.3	631.2	200.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	5.18	36.0	215.0	117.0	6	3.77	117.7	2524.8	1228.4
Վայք						2	3.66	54.3	1430.7	482.4
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.06	45.3	841.6	325.5
Իջևան						1	0.11	240.0	1683.2	775.6
Նոյեմբերյան	2	9.09	488.3	488.3	488.3	12	5.64	45.3	3509.5	464.4

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. նոյեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						36	28923.5	113.2	3612.0	2129.0
Ապարան						1	1190.0	113.2	632.1	178.4
Թալին						1	500.0	45.3	361.2	80.2
Ծաղկահովիտ								45.3	361.2	67.3
Արարատի մարզ										
Արտաշատ	11	12610.0	115.3	175.2	136.8	22	22369.5	135.8	2709.0	815.4
Մասիս	25	21490.0	277.3	1561.9	980.8	22	15220.0	135.8	9030.0	1027.1
Վեդի	5	5000.0	407.0	407.0	407.0	11	11596.0	113.2	993.3	590.2
Արմավիրի մարզ										
Արմավիր						16	16638.0	135.8	2257.5	960.1
Բաղրամյան						1	2000.0	81.5	270.9	116.2
Վաղարշապատ	7	5810.0	750.0	750.0	750.0	42	34242.0	135.8	4515.0	1320.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	1200.0	176.7	176.6	176.6	2	1350.0	135.8	903.0	324.5
Ճամբարակ						3	5208.0	45.3	135.5	87.5
Մարտունի						8	11470.0	90.6	451.5	192.4
Սևան								90.6	903.0	125.2
Վարդենիս								45.3	225.8	90.2
Լոռու մարզ										
Ալավերդի						1	1120.0	67.9	270.9	106.1
Գուգարք								67.9	2347.8	516.6
Սյիտակ						3	4960.0	63.4	451.5	111.1
Ստեփանավան	3	796.0	262.5	277.3	272.3			45.3	270.9	90.4
Տաշիր								45.3	135.5	66.3
Կոտայքի մարզ										
Աբովյան						72	68541.0	135.8	6772.5	1575.1

Եղվարդ	59	53600.0	641.0	1481.3	1025.5	105	111867.0	135.8	6772.5	1695.8
Հրազդան	5	4700.0	413.3	636.0	459.0	12	15110.0	135.8	9030.0	1103.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	21	4186.0	277.2	4750.0	2037.6	1	1250.0	113.2	1535.1	294.8
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի						2	85.7	67.9	180.6	90.5
Աշոցք						1	400.0	40.8	135.5	56.8
Արթիկ	19	10716.8	63.0	2222.2	457.1	1	600.0	67.9	925.6	138.6
Սյունիքի մարզ										
Գորիս	2	800.0	905.0	912.5	908.8	1	50.0	67.9	541.8	218.3
Կապան								67.9	632.1	193.6
Մեղրի								67.9	406.4	108.8
Միսիան						2	3340.0	67.9	406.4	128.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	800.0	686.2	687.5	686.9	5	8390.0	67.9	1128.8	243.2
Վայք								77.0	632.1	110.2
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	82.5
Իջևան	1	750.0	283.5	283.5	283.5	8	4876.0	67.9	1354.5	352.1
Նոյեմբերյան								45.3	632.1	110.4

2006թ. նոյեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 7 գործարքներ 1.20 հա մակերեսով, ընդ որում 3՝ Արարատի /0.65հա/, 3՝ Տավուշի /0.50 հա/ և 1՝ Լոռու /0.05 հա/ մարզերում:

2006թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 745 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.8%: Ընդ որում, վարձակալության գործարքների 30.3% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2006թ. նոյեմբերին 2006թ. հոկտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 0.9%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ նվազել՝ 33.8%-ով:

2006թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 52 բնակարանների, 27 անհատական բնակելի տների, 310 հասարակական, 43 արտադրական նշանակության օբյեկտների, 301 միավոր /6375.93 հա/ հողերի, 11 ավտոտնակների, 1 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2006թ. նոյեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 59 վարձակալության գործարքների քանակը 2006թ. հոկտեմբերի համեմատ աճել է 55.3%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 23.4%-ով:

2006թ. նոյեմբերին հանրապետությունում վարձակալված 6375.93 հա հողերից 8.49 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 6367.44 հա հողերի 16.1% կամ 1023.94 հա, կազմում են գյուղատնտեսական նշանակության, 3.82 հա՝ բնակավայրերի, 5.05 հա՝ ընդերքօգտագործման, 5333.33 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 1.30 հա՝ էներգետիկային օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 5523.23 հա, որից 192.85 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 250.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. նոյեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական

նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	15	217.47
Արարատ	0	0.00	5	192.85
Արմավիր	0	0.00	20	43.09
Գեղարքունիք	0	0.00	10	35.92
Լոռի	0	0.00	33	154.70
Կոտայք	1	40.00	3	5.28
Շիրակ	2	80.00	58	104.02
Սյունիք	3	130.00	8	12.19
Վայոց Ձոր	0	0.00	14	8.43
Տավուշ	0	0.00	0	0.00
Ընդամենը	6	250.00	166	773.95

2006թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1403 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.7%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. հոկտեմբերի համեմատ աճել է 8.4%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 29.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.5%/, առանձնատների /19.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.3%/ և հողերի /17.8%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 599 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 1.2%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 19.3%-ով:

2006թ. նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել են 798.20 հա հողեր, որից 3.72 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 91.8% կամ 732.68 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 592.47 հա, որից 591.50 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2006թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 13 և 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2006թ. հոկտեմբերի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 9.5%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ մնացել է անփոփոխ: 2006թ. նոյեմբերին մասնավորեցման գործարքների բարձր տոկոսաչափն արձանագրվել է Արարատի՝ 26.3%, ցածրը՝ 5.3-ական %, Արմավիրի, Լոռվա, Շիրակի և Սյունիքի մարզերում:

2006թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1862 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. հոկտեմբերի համեմատ աճել է 12.0%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 32.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /37.6%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն